

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Ի Ր Ա Վ Ա Բ Ա Ն Ն Ե Ր Ի Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (64)  
2014 թ.

Գլխավոր խմբագիր՝  
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ բ ա գ Ր ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Խմբագրության հասցեն՝  
ՀՀ, 0025 Երևան,  
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ  
իրավագիտության ֆակուլտետ:  
Հեռ. 060-71-02-47  
Էլ. կայք՝ [www.orenq.am](http://www.orenq.am)

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համամիտ  
չլինելով հեղինակների  
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի  
չպատվիրված նյութերը չեն  
ընդունվում:

e-mail: [ysu@ysu.am](mailto:ysu@ysu.am)

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման քիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.05.2014

Հանձնված է տպագրության

3.07.2014

С О Ю З Ю Р И С Т О В  
Р Е С П У Б Л И К И А Р М Е Н И Я

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (64)  
2014 г.

Главный редактор:  
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Давид Мелконян -

к.ю.н., ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - к.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1, юридический  
факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: a\_petrosyan@ysu.am  
web: www.orenq.am

8 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 18.05.2014  
Подписано к печати 3.07.2014

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

### **Գազիկ Դագինյան, Տաթևիկ Սուջյան**

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ.....5

### **Սամվել Դիլբանդյան**

ՉԵՐԲԱԿԱՆԱԿԱԾ ԱՆՋԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԶԱՓ ՇԱՀԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 16

### **Հրայր Դուկասյան, Անահիտ Հարությունյան**

ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳԵԼՔԸ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԼՈՒՅՄԻ  
ՆԵՐՔՈ.....26

### **Դավիթ Ավետիսյան**

ՅԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՈՄԱՆ  
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
ՆԱԽԱԳԾԻ .....35

### **Վահե Ենգիբադյան**

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՆՈՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ .....45

### **Արթուր Զախոյան**

ՀԱՏՈՒԿ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....53

### **Դավիթ Մելքոնյան**

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ՆՈՐ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԿՇԻՈՆՆԵՐԸ .....62

### **Դավիթ Խաչատրյան**

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹ. ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ,  
ԿԻՐԱՈՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ .....68

### **Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ .....89

### **Գևորգ Բաղդասարյան**

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ.....99

**Արժեքն Գովհանճիայան**

Նոր երեւան եկած Յանգաւանքներով բացառիկ ՎերանաՅման Յիմբերի՝  
ԴԱՏԱՎՃՈՎ ՅԱՍՏԱՏՎԱԾ ԶԼԻՆԵԼՈՒ ԴԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՅ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ.... 110

**Նեյի Աղաբաբյան**

ԱՆԶԱՓԱՀԱՍԻ ԶԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱԿՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ..... 119

**Սարգսյան Հայկ**

ԴԱՏԱՆԱԶԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԸՍՏ ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ..... 130

# ՎՃՌԱՔԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

## Գագիկ Ղազինյան

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան,  
իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ*

## Տաթևիկ Սուջյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ*

Ղատական վերանայման խնդիրների համակարգում իր ուրույն տեղն է զբաղեցնում իրավունքի զարգացման և միասնական իրավաբաղաքականության (օրենքի միատեսակ կիրառության) ապահովումը: Ընդհանուր (նախադեպային) իրավունքի երկրներում այս խնդիրների իրականացումը պարտադիր դատական նախադեպեր ստեղծելու ճանապարհով ավանդաբար դատական իշխանության մարմինների (բարձրագույն դատական ատյանների) գործունեության օրգանական մասն է կազմել: Ինչպես նշվում է տեսական գրականության մեջ, ընդհանուր իրավունքի երկրներում դատավորները ստեղծում են իրավունք, և դատական նախադեպի ուսմունքը ընդհանուր իրավունքի ավանդույթներին պատկանող՝ ամերիկյան իրավական համակարգի պարադիգմատիկ առանձնահատկությունն է<sup>1</sup>: Այդուհանդերձ, այս գործառնությունների իրականացումը խորթ չէ նաև մայրցամաքային իրավունքի երկրների դատական իշխանության բարձրագույն մարմիններին, որոնց դերակատարությունն այս հարցում իհարկե փոքր-ինչ այլ բնույթ ունի: Խոսքը մասնավորապես վերաբերում է ձևական առումով պարտադիր նախադեպի (stare decisis) կանոնի բացակայությանը: Այսինքն՝ այստեղ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովվում է ոչ թե պարտադիր նախադեպեր ստեղծելու, այլ այն հանգամանքի ուժով, որ ստորադաս դատարանները հակված են հետևելու բարձրագույն դատական ատյանների կողմից տրված մեկնաբանություններին՝ խուսափելու համար ապագայում իրենց կայացրած դատական ակտերի հնարավոր բեկանումից<sup>2</sup>:

Վերը շարադրված դատողություններն արդիական են նաև Հայաստանի Հանրապետության՝ որպես մայրցամաքային իրավունքի ավանդույթներ կրող երկրի դատական

<sup>1</sup> Տե՛ս *Jan Komarek*, Judicial lawmaking and Precedent in Supreme Courts, London School of Economics & Political Science (LSE), Legal Studies Working Paper No. 4/2011, էջ 3: [https://www.pravo.unizg.hr/\\_download/repository/Jan\\_Komarek.pdf](https://www.pravo.unizg.hr/_download/repository/Jan_Komarek.pdf)

<sup>2</sup> Տե՛ս *Sofie M. F. Geeroms*, Comparative Law and Legal Translation. Why the Terms Cassation, Revision and Appeal should not be translated. The American journal of Comparative Law vol. 50, N1, (Winter 2002), էջեր 201-228, *Н. В. Лантух*, Формы проверки не вступивших в законную силу приговоров, дисс. канд. юр. наук, Санкт-Петербург, 2011, էջեր 67-82:

համակարգի համար:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի գործունեության՝ օրենքի միատեսակ կիրառության և իրավունքի զարգացման ապահովման նպատակն ամրագրված է նաև ՀՀ Ղատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում: Ընդ որում, կարելի է փաստել, որ նույն օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը, համաձայն որի՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ, նախադեպային համակարգի ներմուծման որոշակի տարրեր է պարունակում:

Իրավունքի զարգացման գործառնայթի հստակ առանձնացումը, ինչպես արդեն նշվել է, առավել բնորոշ է ընդհանուր իրավունքի համակարգին, որտեղ հստակ ընդգծված է վերանայող դատական ատյանների վճռորոշ դերը իրավունքի մեկնաբանման և զարգացման գործում: Մասնավորապես, ամերիկյան մոդելի պայմաններում բարձրագույն դատական ատյանները կոչված են ուղղորդել ստորադաս դատական ատյաններին և հաճախ կանխորոշել իրավունքում անհրաժեշտ փոփոխությունները, խնդիր ունեն հանդգնելու, որ ստորադաս դատարանների կողմից իրավունքը մեկնաբանվելու կիրառվել է ճիշտ և միատեսակ: Եվ այս խնդիրների արդյունավետ իրականացման նպատակով այդ դատական մարմինները կենտրոնացված են սահմանափակ թվով գործերի վրա<sup>3</sup>: Իսկ վերջին հանգամանքը ենթադրում է դատական վերանայման (վճռաբեկ վերանայման) բողոքը վարույթ ընդունելու հայեցողության լայն շրջանակ: Այսպես, օրինակ, ԱՄՆ Գերագույն դատարանի հայեցողական լիազորությունները սահմանող Գերագույն դատարանի 2010 թվականի կանոնների համաձայն՝ դաշնային կամ նահանգային դատարանի դատական ակտը վերանայվում է գործը պահանջելու հրաման արձակելու կամ վերանայման թույլտվության (writ of certiorari կամ leave for appeal) մասին միջնորդության հիման վրա: Իսկ այդ կանոնների 3-րդ բաժնի 10-րդ կանոնի համաձայն՝ Գերագույն դատարանի կողմից միջնորդության բավարարումը ոչ թե իրավունքի, այլ դատական հայեցողության հարց է: Եվ միջնորդությունը կարող է բավարարվել միայն ծանրակշիռ փաստարկների առկայության պարագայում: Կանոնները սահմանում են նաև այն հանգամանքները, որոնք կանխորոշում են դատարանի կողմից հաշվի առնվող փաստարկների բնույթը: Սակայն դատարանի հայեցողությունն այդ հանգամանքներով չի սահմանափակվում: Խոսքը մասնավորապես վերաբերում է այն դեպքերին, երբ կա հակասություն միևնույն կարևոր հարցով վերաքննիչ դատարանների դատական ակտերի միջև կամ ֆեդերալ նշանակության հարցերով՝ վերաքննիչ դատարանների և նահանգային բարձրագույն դատական մարմինների կամ տարբեր նահանգների բարձրագույն դատական մարմինների կամ վերաքննիչ դատարանների, նահանգային բարձ-

<sup>3</sup> Տե՛ս *J. E. Smithburn*, Appellate review of trial court decisions/ Carolina Academic Press, Durham, North Carolina, 2009, էջ 4:

րագույն դատական մարմինների և Գերագույն դատարանի դատական ակտերի միջև, կամ եթե վերաքննիչ դատարանը խախտել է դատական վարույթի ընդունված ընթացակարգը: Միջնորդությունը հազվադեպ է բավարարվում, եթե դատական սխալը վերաբերում է փաստական հանգամանքներին, սխալին կամ հստակ սահմանված նորմի սխալ կիրառությանը<sup>4</sup>:

Այսպիսով, դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը հնարավորություն է տալիս մարդկային, նյութական և այլ ռեսուրսները սահմանափակ թվով գործերի վրա կենտրոնացնելով ստեղծել որակյալ դատական նախադեպեր և ըստ այդմ ապահովել իրավունքի զարգացման գործառույթի արդյունավետ իրականացումը:

Դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված համապատասխան մեխանիզմների մշակման միտում նկատվում է նաև մայրցամաքային իրավունքի համակարգում: Այսպես, օրինակ՝ Ֆրանսիայում չնայած ժխտվում է պարտադիր նախադեպի ինստիտուտի գոյությունը, և Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հայեցողությունը խիստ սահմանափակ է, այդուհանդերձ վերջին տարիներին Վճռաբեկ դատարանի կողմից իր գործառույթների արդյունավետ իրականացման և մեծ թվով գործերի հոսքը կրճատելու նպատակով նախատեսվել են համապատասխան մեխանիզմներ՝ ըստ էության ընդունելիության չափանիշներ: Այսպես, բողոքարկման ազատության որոշակի սահմանափակման դրսևորում է միայն սահմանափակ թվով հատուկ փաստաբանների կողմից վճռաբեկ բողոք բերելու պահանջը: Նույն նպատակին է ծառայում նաև 2001 թվականի հունիսի 25-ին ընդունված օրենքով Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանում բողոքն անընդունելի ճանաչելու նախնական պարզեցված ընթացակարգի ներմուծումը<sup>5</sup>: Հատուկ փաստաբանների միջոցով բողոք բերելու ինստիտուտը Ֆրանսիայի օրինակով նախատեսվել է նաև Բելգիայում, որտեղ ևս Վճռաբեկ դատարանը (Hof van Cassatie) օրենքի միատեսակ կիրառության ապահովման պարտականություն է կրում<sup>6</sup>: Նիդերլանդներում, հաշվի առնելով վճռաբեկ դատարանի (Hoge Road) ծանրաբեռնվածությունը և բողոքները վարույթ ընդունելը մերժելու համապատասխան մեխանիզմների բացակայությունը, դատարանի աշխատանքի ծավալների նվազեցման նպատակով 1987 ընդունված օրենքով լայն (հայեցողություն դրսևորելու հնարավորություն ընձեռող) բնորոշում է տրվել Վճռաբեկ դատարանի խնդիրներին. վերջինս մի կողմից՝ կոչված է երաշխավորելու օրենքի միատեսակ կիրառությունը և իրավունքի զարգացումը՝ միաժամանակ չանտեսելով արդար դատաքննության պահանջները: Իսկ 1988 թվականին ընդունված Դատարանակազմության մասին օրենքի 101ա հոդվածով սահմանվել է, որ Վճռաբեկ դատարանն իրավասու է մերժել վճռաբեկ բողոքը, եթե այն օրենքի միատեսակ կիրառության կամ իրավունքի զարգացման հետ կապված խնդիր չի առաջացնում<sup>7</sup>:

Գերմանիայում դատական վերանայման ռեկզիոն համակարգին բնորոշ է բողոքը վարույթ ընդունելու ավելի խիստ չափանիշների առկայությունը, քան Ֆրանսիայում, Բելգիայում կամ Նիդերլանդներում: Այսպես, վճռաբեկության (ռեկզիայի) կարգով բերված բողոքներն ընդունվում են վարույթ, եթե առկա է վերաքննիչ դատարանի համա-

<sup>4</sup> Տե՛ս *Rules of the Supreme Court of the United States*, Department of Justice 950 Pennsylvania Avenue, N. W Washington, DC 20530-0001.

<http://www.supremecourt.gov/ctrules/2013RulesoftheCourt.pdf>

<sup>5</sup> Ավելի մանրամաս տե՛ս, *Sofie M. F. Geeroms*, նշված աշխատությունը, էջեր 204-208,

The role of the Court of Cassation. [http://www.courdecassation.fr/about\\_the\\_court\\_9256.html](http://www.courdecassation.fr/about_the_court_9256.html)

<sup>6</sup> Տե՛ս *Sofie M. F. Geeroms*, նշված աշխատությունը, էջեր 208-210:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջեր 211-214:

պատասխան թույլտվությունը, կամ եթե Գերագույն դատարանը բավարարել է թույլտվությունը մերժելու մասին վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված բողոքը: Օրենսդիրը հստակեցրել է նաև ռեկզիայի կարգով դատական ակտը բողոքարկելու թույլտվություն տալու հիմքերը, որոնք մասնավորապես հանգում են հետևյալին՝

1) առկա է առանձնահատուկ կարևորության գործ,

2) կամ՝ իրավունքի զարգացման կամ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար պահանջվում է Վճռաբեկ դատարանի որոշումը<sup>8</sup>:

Տեսական գրականության մեջ չկա դատական հայեցողության շրջանակների վերաբերյալ միասնական մոտեցում<sup>9</sup>: Կան հեղինակներ, ովքեր ընդունում են դատական հայեցողության առկայության փաստն ու դրա նշանակությունը, սակայն միևնույն ժամանակ ընդգծում են, որ այն պետք է հիմնված լինի ոչ թե դատարանի (դատավորի) անհատական նախապատվության, այլ օրենքով սահմանված չափանիշների վրա<sup>10</sup>: Այստեղ հարկ ենք համարում ընդգծել, որ խնդրի օրենսդրական կանոնակարգման ժամանակ, մեր կարծիքով, պետք է հաշվի առնել նաև դրա սերտ կապը արդարադատության մատչելիության իրավունքի և իրավական որոշակիության սկզբունքի հետ և իրավաչափ շահերի համակողմանի հաշվառմամբ փորձել տալ խնդրի հնարավորինս արդյունավետ լուծում:

Արդարադատության մատչելիության իրավունքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) բազմիցս նշել է, որ այս իրավունքը բացարձակ բնույթ չի կրում: Այն կարող է որոշակիորեն սահմանափակվել, սակայն պայմանով, որ այդ սահմանափակումները չպետք է լինեն այնպիսի բնույթի, որ հակասեն բուն իրավունքի էությանը<sup>11</sup>: Եվ սահմանափակումը չի համապատասխանի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և բացակայում է ողջամիտ հավասարակշռությունը կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև<sup>12</sup>: Արդարադատության մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և արդյունավետ: Արդյունավետությունը ենթադրում է, որ անձը պետք է հստակ և իրական հնարավորություն ունենա վիճարկելու ցանկացած միջան-

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջեր 214-218, Federal Court of Justice, Published by the Federal Court of Justice, Karlsruhe, 2010, էջ 10: [http://www.bundesgerichtshof.de/SharedDocs/Downloads/EN/BGH/brochure.pdf?\\_\\_blob=publicationFile](http://www.bundesgerichtshof.de/SharedDocs/Downloads/EN/BGH/brochure.pdf?__blob=publicationFile)

<sup>9</sup> Տե՛ս *Maria Iglesias Vila*, Judicial Discretion and Judicial Positivism. The substantive criteria of validity.

[http://www.law.yale.edu/documents/pdf/Iglesias\\_Judicial\\_Discretion\\_and\\_Judicial\\_Positivism.pdf](http://www.law.yale.edu/documents/pdf/Iglesias_Judicial_Discretion_and_Judicial_Positivism.pdf).

*John Bilyeu Oakley*, Taking Wright Seriously: Of judicial discretion, Jurisprudents and the Chief Justice. <http://hastingsconlawquarterly.org/archives/V4/I4/oakley.pdf>

<sup>10</sup> Տե՛ս *R. Dworkin*, 'Judicial Discretion', (1963) The Journal of Philosophy Vol. 60, No. 21, American Philosophical Association, Eastern Division, Sixtieth Annual Meeting, էջեր 624-638:

<sup>11</sup> Տե՛ս *Harrison McKee v. Hungary*, գանգատ թիվ 22840/07, 2014 թվականի հունիսի 3-ի վճիռ, §21, *Egic v. Croatia* գանգատ թիվ 32806/09, 2014 թվականի հունիսի 5-ի վճիռ, §48, *García Manibardo v. Spain*, գանգատ թիվ 38695/97, 2000 թվականի փետրվարի 15-ի վճիռ, §36, *Mortier v. France*, գանգատ թիվ 42195/98, 2001 թվականի հուլիսի 31-ի վճիռ, §33:

<sup>12</sup> Տե՛ս *Markovic and Others v. Italy [GC]*, գանգատ թիվ 1398/03, 2006 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ, §99, *Masirevic v. Serbia*, գանգատ թիվ 30671/08, 2014 թվականի փետրվարի 11-ի վճիռ, §46, *Baka v. Hungary*, գանգատ թիվ 20261/12, 2014 թվականի մայիսի 27-ի վճիռ, §73, *Papon v. France*, գանգատ թիվ 54210/00, 2002 թվականի հուլիսի 25-ի վճիռ § 90:



տություն իր իրավունքների իրականացմանը<sup>13</sup>: Արդարադատության մատչելիության իրավունքի երաշխավորման լուսի ներքո Եվրոպական դատարանն իրավաչափ է համարում բողոքարկման իրավունքի որոշակիորեն սահմանափակումը, մասնավորապես բողոքը վարույթ ընդունելու պայմանների նախատեսումը և պետության կողմից այս հարցում համապատասխան հայեցողություն դրսևորելու հնարավորությունը: Եվրոպական դատարանը նշել է, որ դատական վերանայման բողոք ներկայացնելու համար ժամկետներ և այլ ձևական պահանջներ սահմանող կանոններ նախատեսելը նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը և իրավական որոշակիության սկզբունքի երաշխավորումը: Այդուհանդերձ այդ կանոնները չպետք է անձին գրկեն իր իրավունքների պաշտպանության հասանելի միջոցից<sup>14</sup>: Եվրոպական դատարանն ընդգծել է նաև, որ իրավունքի հիմքով վերանայման պարագայում օրենքով կարող են նախատեսվել բողոքը վարույթ ընդունելու ավելի խիստ պահանջներ: Հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ դերը՝ համապատասխան ընթացակարգն այստեղ կարող է ավելի ֆորմալ լինել հատկապես այն պարագայում, երբ վճռաբեկ վերանայմանը նախորդում է գործի քննությունն առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանում, որոնք իրավասու են անդարադառնալու նաև փաստի հարցերի<sup>15</sup>:

Անդրդառնալով ներպետական օրենսդրական կարգավորմանը՝ հարկ է նշել, որ ՀՀ բարձրագույն դատական աստիճանի առջև դրված արդեն իսկ հիշատակված խնդիրները պայմանավորեցին Վճռաբեկ դատարանի գործունեության ձևերի վերափոխումը և համապատասխանեցումն առաջադրված պահանջներին: Նախքան 2006 թ. հուլիսի 7-ի օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները գործում էր վճռաբեկ բողոքարկման ազատության սկզբունքը, և օրենքով նախատեսված ձևական պահանջները բավարարող բողոքն անվերապահորեն ընդունվում էին վարույթ և դառնում Վճռաբեկ դատարանի քննարկման առարկա: Նշված օրենքով ներդրվեց դատական ակտերի բողոքարկման թույլատրական (դիսկրեցիոն) կարգ, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար այն պետք է համապատասխանի որոշակի բովանդակային չափանիշների<sup>16</sup>: Այսպիսով, դատական իշխանության բարձրագույն մարմնի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման (իրավունքի զարգացման) գործառույթի իրականացումը պահանջում է վերջինիս ծանրաբեռնվածության նվազեցման համապատասխան մեխանիզմների մշակում, այդ թվում՝ բողոքը վարույթ ընդունելու և ըստ այդմ դատական ակտը վերանայելու հայեցողական լիազորությունների նախատեսում: Սակայն միևնույն ժամանակ այս գործառույթի արդյունավետ իրականացումը չպետք է ապահովվի արդարադատության շահերի հաշվին: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանոնակարգումը պետք

<sup>13</sup> Տե՛ս *Mizzi v. Malta*, գանգատ թիվ 26111/02, 2006 թվականի հունվարի 12-ի վճիռ, §80, *De Jorio v. Italy*, գանգատ թիվ 73936/01, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ, §45, *Cordova v. Italy (No. 1)*, գանգատ թիվ 40877/98, 2003 թվականի հունվարի 30-ի վճիռ, §52:

<sup>14</sup> Տե՛ս *Canete de Goni v. Spain*, գանգատ թիվ 55782/00, 2002 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռ, §36, *Miragal Escolano and others v. Spain*, գանգատներ թիվ 38366/97, 38688/97, 40777/98..., 2000 թվականի հունվարի 25-ի վճիռ, *Zvolky and Zvolkska v. The Czech Republic*, գանգատ թիվ 46129/99, 2002 թվականի նոյեմբերի 12-ի վճիռ, §51:

<sup>15</sup> Տե՛ս *Levages Prestations Services v. France*, գանգատ թիվ 23920/93, 1996 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռ, §44-48, *Brualla Gómez de la Torre v. Spain*, գանգատ թիվ 26737/95, 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ, §34-39, *Meftah and Others v. France [GC]*, գանգատներ թիվ 32911/96, 35237/97 և 34595/97, 2002 թվականի հուլիսի 26-ի վճիռ, §41:

<sup>16</sup> Տե՛ս **Ռ. Ն. Մելիքյան**, Դատական վերանայումը ՀՀ քրեական դատավարությունում/ Դատավորի ձեռնարկ: Գիտագործնական վերլուծություն: -Եր.: Ասողիկ, 2010, էջ 345:

է իրականացվի այն հաշվով, որ բացառվի ընտրողական արդարադատության իրականացումն այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է անձի հիմնարար իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալներին:

Նպատակ ունենալով ներկայացնել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) վճռաբեկ բողոքը վարույթը ընդունելու օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները՝ նպատակահարմար ենք գտնում դա իրականացնել վերոհիշյալ դիրքորոշման լույսի ներքո ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի և Նախագծի կարգավորումների համեմատադրական հետազոտության միջոցով: Այսպես, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ

3) վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

4) առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

Նախագծի 386-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե հանգում է հետևության, որ՝

1) վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, կամ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք, և միաժամանակ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) առերևույթ ի հայտ է եկել որևէ լուրջ փաստական կամ իրավական հանգամանք, կամ առերևույթ թույլ է տրվել լուրջ դատական սխալ, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Այսպիսով, և՛ գործող քրեական դատավարության օրենսգրքում, և՛ Նախագծում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից մեկը բողոքում բարձրացված հարցի առնչությամբ օրենքի միատեսակ կիրառության պահովման անհրաժեշտությունն է: Սակայն ի տարբերություն գործող օրենսդրական կարգավորման՝ Նախագծում հստակեցված են օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտության մասին վկայող դեպքերը, որոնք մասնավորապես հանգում են հետևյալին՝

1) ստորադաս դատարանների՝ տարբեր վարույթներով առնվազն երկու դատական ակտերում միևնույն նորմը կիրառվել է իրար հակասող մեկնաբանությամբ,

2) բողոքարկվող դատական ակտում կոնկրետ նորմին տրված մեկնաբանությունը (հիմնավորումը) հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը (հիմնավորումներին),

3) բողոքարկվող դատական ակտում կոնկրետ նորմին տրված մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը,

4) բողոքարկվող դատական ակտում կոնկրետ նորմին տրված մեկնաբանությունը (հիմնավորումը) հակասում է մեկ այլ վարույթով վճռաբեկ դատարանի որոշման մեջ

տվյալ նորմին տրված մեկնաբանությանը (հիմնավորումներին)<sup>17</sup>,

5) վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր (Նախագծի 386-րդ հոդվածի 2-րդ մաս):

Դեռ ավելին, Նախագծի 387-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է այն եղանակները, որոնցով պետք է հիմնավորվի օրենքի միատեսակ կիրառության համար բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի հնարավոր որոշման էական նշանակությունը: Մասնավորապես, բողոքին պետք է կցվեն համապատասխան դատական ակտերը՝ մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն հնարավոր հակասության վերաբերյալ:

Նախագծում օրենքի միատեսակ կիրառության ապահովման հստակ սահմանված հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խոսքը ոչ միայն ՀՀ դատական համակարգի, այլև այդ համակարգի և դրանից դուրս գործող մարմինների դատական ակտերի հնարավոր հակասության դեպքերի մասին է: Խնդրի նման օրենսդրական կանոնակարգումը բխում է դատական համակարգի և այդ համակարգից դուրս գործող մարմինների միջև ամուր գործառնական կապեր ստեղծելու անհրաժեշտությունից և բացի դրանից՝ միասնական դատական պրակտիկա ձևավորելու լիարժեք հնարավորություն է ընձեռում: Մասնավորապես ստորադաս դատարանների դատական ակտերի հակասությանը վերաբերող հիմքերից քննարկման կարիք ունի այն հարցը, թե արդյոք խոսքը առաջին և վերաքննիչ դատարանների, թե միայն վերաքննիչ դատարանի՝ միևնույն նորմի հակասական մեկնաբանություն պարունակող դատական ակտերի մասին է: Նախագծում տրված կարգավորման տառացի մեկնաբանությունից բխում է, որ խոսքը վերաբերում է նաև տարբեր վարույթներով առաջին և վերաքննիչ դատարանների դատական ակտերին: Հաշվի առնելով առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերաքննիչ բողոքարկման և դրա արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հնարավորությունը՝ կարծում ենք՝ բողոքը վարույթ ընդունելու անհրաժեշտ նախապայմանը պետք է լինի վերաքննիչ դատարանի տարբեր վարույթներով նույն նորմի հակասական մեկնաբանությամբ դատական ակտերի առկայությունը: Օրենքի միատեսակ կիրառության ապահովման դեպքերը սահմանելիս Նախագիծը չի սահմանափակվել միայն համապատասխան դատական ակտերի միջև հակասության առկայությամբ, այլև արդարացիորեն առանձնացրել է բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ իրավունքի զարգացման խնդրի առկայության հիմքը: Խոսքը մասնավորապես վերաբերում է այն դեպքերին, երբ վճռաբեկ դատարանի արժեքային իրավամեկնաբանությունը ծառայում է որպես անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման արդյունավետ միջոց:

Ինչպես արդեն նշվել է, գործող օրենսդրական կարգավորման համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է վարույթ, եթե վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ: Չափազանց անորոշ և խիստ գնահատողական բնույթ կրող այս հիմքը փոխարինվել է կոպիտ դատական սխալների հստակ սահմանված շրջանակով: Մասնավորապես, ըստ Նախագծի՝ կոպիտ դատական սխալ է, երբ.

<sup>17</sup> Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու այս հիմքը, լինելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտության մասին վկայող մասնավոր դեպք, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված է որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու ինքնուրույն հիմք, մինչդեռ Նախագծում այն արդարացիորեն ընդգրկվել է օրենքի միատեսակ կիրառության ապահովման հիմքերի մեջ:

1) քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության պայմաններում քրեական հետապնդումը չի դադարեցվել կամ արդարացման դատավճիռ չի կայացվել.

2) մեղադրյալի արարքին տրվել է իրավական սխալ գնահատական.

3) մեղադրյալի նկատմամբ նշանակվել է նրան վերագրվող հանցագործության համար օրենքով չնախատեսված պատժատեսակ, պատժաչափ կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը սխալ է հաշվարկվել.

4) թույլ է տրվել նույն օրենսգրքի 381-րդ հոդվածով սահմանված՝ քրեադատավարական օրենքի որևէ խախտում (գործող քրեական դատավարության օրենսգրքի իմաստով դատական ակտի անվերապահ բեկանման հիմքեր):

Գործող օրենսդրական կարգավորման վերաբերյալ դեռևս ԵԱՀԿ ԺՀՄԻԳ 2012 թվականի նոյեմբերի 12-ի վճռաբեկ բողոքի ընդունելիության առանձին խնդիրների վերաբերյալ զեկույցում (այսուհետ՝ ԵԱՀԿ զեկույց) դիրքորոշում է արտահայտվել այն մասին, որ առաջադեմ միջազգային փորձի համաձայն՝ բարձրագույն դատական ատյանները բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը գնահատելիս հաշվի են առնում ինքնին խախտման, այլ ոչ թե դրա հնարավոր հետևանքների ծանր բնույթը, որովհետև միշտ չէ, որ կոպիտ դատական սխալը կարող է անհրաժեշտաբար ծանր հետևանքներ առաջացնել: Բացի դրանից՝ առաջարկվել է նաև հստակեցնել դատական սխալների շրջանակը՝ կոպիտ սահմանելով կոնկրետ հիմքեր՝ երաշխավորելու համար իրավական որոշակիության սկզբունքը և ամրապնդելու համար հասարակության վստահությունը արդարադատության իրականացման նկատմամբ<sup>18</sup>:

Նախագծում սահմանված դատական կոպիտ սխալների շրջանակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ընդգրկում են անձի հիմնարար իրավունքներին և օրինական շահերին առնչվող նյութական և դատավարական իրավունքի առավել ծանր խախտման հնարավոր դեպքերը, որոնք նույնանում են վճռաբեկ բողոքի սահմաններից դուրս գալու, որոշակիորեն անգամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի՝ հիմնարար խախտման հիմքով բողոքարկման հիմքերին (հիարկե վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի շրջանակը շատ ավելի լայն է)<sup>19</sup>:

Ինչպես արդեն նշվել է, Նախագծի 386-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում խոսքը ոչ թե ցանկացած, այլ միայն կոպիտ դատական սխալների մասին է, իսկ ցանկացած այլ դատական սխալի առկայության պարագայում բողոքն ընդունվում է վարույթ, եթե առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունը:

Նախագծով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է նաև դատական ակտի իրավաչափության վրա ազդող փաստական կամ իրավական լուրջ հանգամանքի առկայությունը: Իսկ Նախագծի իմաստով լուրջ են համարվում հետևյալ փաստական կամ իրավական հանգամանքները՝

1) ուժի մեջ մտած համաներման ակտը կիրառելի է մեղադրյալի նկատմամբ,

2) լրացել է մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղե-

<sup>18</sup> St' u Opinion on selected issues regarding the admissibility of appeals to the Cassation Court of the Republic of Armenia. OSCE, ODHIR Warsaw, 29 November 2012 Opinion-Nr.: JUD-ARM/212/2012 (LB), էջեր 6-7:

<sup>19</sup> Հարկ է նաև ընդգծել, որ վերը հիշատակված ԵԱՀԿ զեկույցում որպես օրինակելի օրենսդրական կարգավորման օրինակ վկայակոչված Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքում (427-րդ հոդվածի 1-ին մաս) նախատեսված՝ դատական սխալի հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու դեպքերն ըստ էության նույնանում են Նախագծով սահմանված հիմքերն (խոսքը վերաբերում է մասնավորապես արարքի իրավական սխալ գնահատականին, քրեադատավարական օրենքի էական խախտման դեպքերին):

մության ժամկետը,

3) մեղադրյալը մահացել է,

4) որևէ այլ փաստական հանգամանք, որի կապակցությամբ վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա է դատական ակտի վերանայում իրականացնելու անհրաժեշտություն (Նախագծի 386-րդ հոդվածի 4-րդ մաս):

Նախագծով ընդհանրապես դատական վերանայման բողոք բերելու հիմքերից մեկը որևէ փաստական կամ իրավական հանգամանքի առկայությունն է, որը կարող է ազդել դատական ակտի իրավաչափության վրա (Նախագծի 360-րդ հոդվածի 2-րդ կետ): Իսկ Նախագծի 365-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող փաստական կամ իրավական հանգամանք է դատական ակտ կայացնելիս դատարանին և կողմերին անհայտ մնացած կամ դատական ակտը հրապարակելուց հետո առաջացած որևէ փաստ կամ ուժի մեջ մտած որևէ իրավական ակտ կամ արտահայտված որևէ իրավական դիրքորոշում: Այս բնորոշումից և Նախագծի 386-րդ հոդվածի 3-րդ մասում ներկայացված ցանկից կարելի է եզրակացնել, որ դրանք չեն ենթադրում դատական սխալի առկայություն, սակայն դատական ակտի իրավաչափության վրա անխուսափելիորեն ազդելու հանգամանքի ուժով նախատեսված են որպես դատական ակտի վերանայման հիմք: Իհարկե գործող քրեական դատավարության օրենսգիրքը ևս, բացի օրենքի միատեսակ կիրառության ապահովման և դատական սխալի առկայության դեպքերից, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի շարքում նախատեսում է նաև նոր և նոր երևան եկած հանգամանքները: Սակայն այս օրենսդրական կարգավորման թերություններից մեկն այն է, որ նոր և նոր երևան եկած հանգամանքները նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման հիմքեր են, այսինքն՝ նույնացվում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բացառիկ և օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի սովորական, տվյալ պարագայում՝ վճռաբեկ վերանայման հիմքերը: Եվ երկրորդ, գործող քրեական դատավարության օրենսգրքում նոր ու նոր երևան եկած հանգամանքների և Նախագծում փաստական ու իրավական հանգամանքների բնորոշման և առանձին հիմքերի համեմատախրավական վերլուծությունից բխում է, որ դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող փաստական կամ իրավական հանգամանքների շրջանակը շատ ավելի լայն է, քան նոր կամ նոր երևան եկած հանգամանքները: Եթե ցանկացած նոր կամ նոր երևան եկած հանգամանք կարող է բնորոշվել որպես դատական ակտի իրավաչափության վրա ազդող, ապա ցանկացած փաստական կամ իրավական հանգամանք չէ, որ կարող է ընդգրկվել նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հասկացության տակ (օրինակ՝ մեղադրյալի նկատմամբ կիրառելի համաներման ակտի առկայությունը):

Քննարկվող խնդրի շրջանակներում հիշատակման արժանի է նաև բողոքը վարույթ ընդունելը մերժելու (բողոքը վերադարձնելու) որոշման պատճառաբանության խնդիրը: Սակայն նշված խնդրին անդրադարձ կարվի միայն ընդհանուր գծերով՝ հաշվի առնելով, որ այն կարող է առանձին ուսումնասիրության առարկա լինել: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ վերանայող դատական ատյաններն առավելապես բողոքը վարույթ չընդունելու մասին որոշումները պատճառաբանելու պարտականություն չեն կրում և կարող են բավարարվել անհրաժեշտ հիմքերի բացակայության վերաբերյալ համապատասխան նշում կատարելով<sup>20</sup>: Կարծում ենք՝ կարելի է նախնական դիտարկում անել այն մասին, որ Նախագծում բողոքը վարույթ ընդունելու հիմքերի հստակ շարադրման պայմաններում քննարկվող խնդիրը կորցնում է այն արդիականությունը, որն

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, էջեր 8-9:

առկա է գործող օրենսդրական կարգավորման պայմաններում, երբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը կրում են առավելապես գնատահատողական և խիստ անորոշ բնույթ<sup>21</sup>: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Նախագծի 388-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե վճռաբեկ բողոքում վկայակոչված է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման որևէ պայման (խոսքը վերաբերում է համապատասխան դատական ակտերի հակասությանը), ապա վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վկայակոչված պայմանի բացակայությունը:

Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ Նախագծում սահմանված՝ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանոնակարգումն իր բնույթով վճռաբեկ դատարանի գործունեության մեջ օրենքի միատեսակ կիրառության և արդարադատության իրականացման գործառնությունների ողջամիտ հավասարակշռման փորձ է: Այսինքն՝ մի կողմից գործում է բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգ՝ որպես օրենքի միատեսակ կիրառության արդյունավետ իրակացման երաշխիք, մյուս կողմից այդ հիմքերի օրենսդրական կանոնակարգումն իրականացվել է այն հաշվով, որ Վճռաբեկ դատարանը՝ որպես դատական իշխանության բարձրագույն մարմին, հնարավորություն ունենա իրականացնելու իր հիմնական՝ արդարադատության գործառնությունը: Եվ թերևս առավել էական նորամուծությունը Նախագծում համապատասխան հիմքերի հնարավորինս հստակ սահմանումն է, ինչն անկասկած կնպաստի Վճռաբեկ դատարանի կողմից իր սահմանադրական լիազորությունների առավել արդյունավետ իրականացմանը:

## FEATURES OF THE LEGISLATIVE REGULATION OF THE GROUNDS FOR ADMISSIBILITY OF CASSATION APPEAL IN THE DRAFT CCP OF THE RA

**Gagik Ghazniyan**

*Dean of the YSU Faculty of Law*

*Doctor of Law, Professor, RA NAS Associate member*

**Tatevik Sujyan**

*PhD student of the Criminal procedure and Criminalistics Chair*

The article is devoted to the regulation of the admissibility procedure of appeals to the Court of Cassation of the RA in the Draft CCP of the RA. It stresses the necessity of balanced ensurance of the Cassation Court tasks to provide uniformity in law and to respect the requirements of the fair trial. It reveals the main features of new domestic regulation based on the analysis of case law and civil law traditions, the ECHR case-law and theoretical sources as well regarding the limits of the discretion on the admissibility.

<sup>21</sup> Հարկ է նշել, որ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանված որոշումն այս պարագայում հանդես է գալիս որպես արդարադատության մատչելիության և իրավական որոշակիության սկզբունքի երաշխավորման միջոց, սակայն այստեղ էլ որոշակի խնդիրներ են առաջանում պատճառաբանվածության չափանիշների և շրջանակների հետ կապված, որոնց, ի դեպ, որոշակի անդրադարձ կա արդեն իսկ վկայակոչված ԵԱՀԿ զեկույցում:

## ОСОБЕННОСТИ ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ ОСНОВАНИЙ ПРИЕМЛЕМОСТИ КАССАЦИОННЫХ ЖАЛОБ В ПРОЕКТЕ НОВОГО УПК РА

**Гагик Казинян**

*Декан юридического факультета ЕГУ,  
Доктор юридических наук, профессор,  
член-корреспондент НАН Республики Армения*

---

**Татевик Суджян**

*Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ*

---

Статья посвящена анализу правового регулирования порядка приемлемости кассационных жалоб в Проекте нового УПК РА. В статье подчеркивается необходимость сбалансированного осуществления конституционных функций Кассационного суда по обеспечению единого применения закона и осуществлению правосудия. Статья раскрывает основные черты нового правового регулирования на основе анализа прецедентного права и континентального права, судебной практики Европейского суда по правам человека, а также теоретических источников о пределах усмотрения суда относительно приемлемости кассационных жалоб.

**Բանալի բառեր** – իրավունքի զարգացում, օրենքի միատեսակ կիրառություն, հայեցողական լիազորություններ, արդարադատության մատչելիություն, իրավական որոշակիության սկզբունք, դատական կոպիտ սխալ, իրավական հանգամանք, փաստական հանգամանք, հայեցողական կարգ, բողոքի ընդունելիության չափանիշներ

**Key words:** Development of law, uniform application of law, discretionary powers, access to court, principle of legal certainty, fundamental judicial error, legal circumstances, factual circumstances, discretionary order, standards on the admissibility of the appeal.

**Ключевые слова:** Развитие права, единое применение права, дискреционные полномочия, доступ к правосудию, принцип правовой определенности, грубая судебная ошибка, правовое обстоятельство, фактическое обстоятельство, дискреционный порядок, стандарты приемлемости жалобы